ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, երկուշաբթի. - Գ. օր Ծննդեան պահոց: Կաղանդ, Տարեմուտ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն վարդապետ Նանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 5-ին, ուրբաթ. – Ճրագալոյց Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի Մայրավանքի ողջ միաբանությունը, հանդիսապետությամբ Վեհափառ Հոր, Ս. Ծննդյան շարականների երգեցողությամբ ուղղվեց դեպի Վեհարան, որտեղ Տնօրհնեքի արարողություն կատարելուց հետո շարժվեց սեղանատուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ծննդյան ավետիսը խնդությամբ տոնելու:

Հունվարի 6-ին, շաբաթ. – ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ Նորին Սրբությունը Սուրբ Ծննդյան Հայրապետական իր պատգամն ուղղեց համայն հայ ժողովրդին (տես էջ 3):

Հընթացս Ս. Պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Ջրօրհնեքի արարողություն:

Հունվարի 7-ին, կիրակի. - Բ. օր Ծննդեան: Մեռելոց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գաբրիել աբեղա Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 13-ին, շաբաթ. – Ը. օր Ծննդեան: Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վարդապետ Ջիրեկյանցը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 14-ին, կիրակի. - Ա. կիր. զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովհաննես աբեղա Մայիլյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 21-ին, կիրակի. - Բ. կիր. զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 28-ին, կիրակի. - Գ. կիր. զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արարատ եպիսկոպոս Գալթազճյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը □Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս Քո□ (Սաղմ. Ծ 17) բնաբանով քարոզ խոսեց (տես էջ 28):

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց «Հանրապետական մաղթանք»: